


831.99

1900

5-87



ՊԵՏՐՈՍ ՄՈՃՈՒԵԼՆՅ

ՄՐՏԻ ՎԵՐՔԵՐԸ

(Արձաղ բանաստեղծություններ)

891.99

Մ-87

Աղեհանդրապոլ

Տարածող Դեպո. Ս. Մանուկյանի

I

891.99

Մ-87

ՄԷ

735-ԱԷ

891.99 *my.*
5-87

ՊԵՏՐՈՍ ՄՈՃՈՌԵԱՆՑ

ՄՐՏԻ ՎԵՐՔԵՐԸ

(1001
1005-1)
16862-58

(Արձաղ բանաստեղծություններ)



Աղբաւորապօլ

Տպարան Գէորգ Ս. Սանդեանցի

1900

33223-Ա.Է.

Дозволено цензурою 24 Апр. 1900 г.
г. Тифлисъ

ԻՐ ՍԻՐԵԼԻ

ՎԱՐԴԱՆ ՏԻԳՐԱՆԵԱՆԻՆ

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՆՈՒՋՐ.

Արտատպուած «ՏԱՐԱԶ» և «ԱՂԲԻՒՐ»
գրականական հանդէսներէց:

I

Կ Ի Ն Ը

Քարի Արամազդը վերջացրել էր աշխարհի ստեղծագործութիւնը. նա գոհ և ուրախ շրջում էր կանաչադարդ երկրի վերայ և սքանչանում էր բնութեան հրաշալիքներով: Նրա ստեղծած մայր բնութիւնը զարդարուած էր ծովի գեցուհու մանկամարդ յաւերժահարսների նման. օդը լցուած էր մի երկնային բուրմունքով և ջինջ ու կապոյտ տարածութեան մէջ թռչում էին գեղեցիկ թևաւորները:

Աստուածների հայրը ստեղծել էր նա և մարդ արարածը. նրան անուանել էր Աուրահ և նրան ապրե-

լու վայր ընտրել էր Քարթէ լեռան
այն չքնաղ քարանձաւը, որի մէկ
կողմը տարածվում էր Ուրարտուի
չքնաղ ծովը իր յաւերժական գե-
ղեցկութեամբ, իսկ միւս կողմը եր-
կարածգվում էր սօսիների անտառը
իր մշտնջենական հրաշալիքներով:

Քարի աստուածը շրջում էր եր-
կրի վերայ և տեսնում էր գեղեցիկ
բնութեան մշտավառ հրապոյրը: Նա
երբեմն այցելում էր անտառի ֆէ-
ային, ծովի յաւերժահարսներին,
գնում էր տեսնելու բարի Անահ-
տին, գեղեցկութեան մշտավառ հր-
րապոյրներով զարդարուած սիրոյ
չքնաղ դիցուհուն և քանաստեղծու-
թեան ու քնարի պատանի աստը-
ծուն: Այդ դիւթական վայրերից,
ուր գեռ ևս գտնվում էին աստու-

ածների անձանները, նա աչքը քը-
ցում էր դէպի երկինք և դիտում
վերջալոյսի այն տիտւր, մեկամաղձոտ
շողբերը, որոնք ոսկեգոյն փայլերով
ողողում էին Սօսեաց նուիրական
անտառի սրբազան ծառերի կա-
տարները:

Ոսկեգոյն ճառագայթների ան-
նման ցոլքը ընկնում էր բարձրա-
բերձ մայրիների վերայ և անհամար
տերեւների միջից անցնելով, այն
լուռ ու յաւերժական հանգստու-
թեան մէջ ուրուազծում էր մի
սքանչելի ոսկեկար... Մշտնջենա-
կան հանգստութիւն, ուր երբեմն
երբեմն երաժշտութեան պատանի
աստուածն էր գալիս իր աստուա-
ծային սրտի թախիժը երկնային
քնարի մրմունջներով փարատելու:

Աստուածներին հայրը կանգնում էր Աստղօնը լեռան բարձրութեան վերայ և գիշերային լուութեան մէջ նայում էր երկնային գեղեցկութեան արծաթափայլ ճառագայթներին, որ ողողում էր հինաւուրց լեռների ձիւնադարձ գագաթները, կարկաշատ առուների մանր ու գեղեցիկ ալիքները և հեռուն որոտացող ծովի անվերջ կոհակները... Նա լեռան ստորոտում տեսաւ չքնաղ Աստղիկի քարանձաւը լուռ ու անշուք։ Երկնային դիցունու ապարանքը չէին զարդարում հազարաւոր և գոյնզգոյն կանթեղների լոյսերը և չէին լսվում յաւեեթահարսների ուրախ երգերի դիւթական զալայլը։ Դիցունին անձաւում չկար, նա գնացել էր անտառի Փէայի մօտ իր վշտացած

սրտի դառն թախիծը նրա ներկայութեամբ փարատելու համար։

Այդ բարձրութեան վերայից աստուածների հայրը տեսնում էր հեռաւոր և անսահման ծովը, որի աւազոտ ափի մօտ նստած էր նրա աննման դիցունին չքնաղ Օրէադան։ Դիցունին աչքը քցել էր այդ անհուն տարածութեան վերայ և անվերջ դիտում էր կապուտակ ծովին, որի հեռաւոր ափերը կորչում էին անսահման տարածութեան մէջ և որի անհասկանալի որոտը իր սիրտը լցնում էր մի անսովոր զգացմունքով... Դիցունին նայում էր ալիքներին, որոնք իրար յետևից վազելով՝ թռչում և ընկնում էին ծովի աւազոտ ափի վերայ, թրջում էին իր չղարշի քղանցքները և նրա փըր-

փութի նուազումը բարի գիցուհուն
մղում էր հոգսերով լի մտածմունք-
ների աշխարհը: Այդքան հեռաւոր
տարածութեան վերայից սահող
փրփուրը հանգչում ու մարում էր
ափի վերայ... այդ անսղոք ափը
վերջ էր դնում նրա քմահաճ դու-
արճութիւններին: Ափ և հանգիստ..
ո՛հ, այս ահաւոր ծովը միթէ երկ-
րային կեանքի ճշգրիտ պատկերը
չէ՞, ուր ամեն բան գիմում է դէ-
պի կորուստ, դէպի ոչնչութիւն, դէ-
պի մշտնջենական հանգիստ, միշտ
աննպատակ, միշտ միատեսակ... Եւ
այս տխուր մտածմունքներն էին,
որ տանջում էին ծովի յաւերժական
գիցուհու ղեռատի սիրտը և մղում
նրան ինքնամօռացութեան աշխար-
հը:

Արամազդը չ'կամեցաւ վրդովել
մանկամարդ գիցուհու հանգիստը.
Թողեց նրան առանձին իր խոհերի
հետ և ինքը վար իջաւ Աստղօնը
լեռան գագաթից: Ապա նա անցաւ
Ապոլոնի խորհրդաւոր անցաւի մօ-
տից և կամեցաւ տեսնել երաժըշ-
տութեան աստծուն: Բայց այդ ժա-
մանակ մատաղահաս Ապոլոնը գը-
լուխը դրած գեղեցիկ շատրուանի
մարմարէ քարերի վերայ՝ ննջում էր
հանգիստ: Նրա մօտ, գետնի վերայ
ընկած էր իր ոսկեղէն քնարը լուռ
ու փշրուած: Այն երկնային քնարի
գեղեցիկ լարերը կտրուած էին,
երաժշտութեան աստուածը ընկըղ-
մուել էր խոր քնի մէջ, իսկ սրբազան
անձաւի նուիրական հանգիստը վըր-
դովում էր միայն հեռաւոր անտա-

ռի հեղեղատի միանուագ որոտը, որ հովի ձայների հետ գալով՝ յիշեցնում էր օրհասական սրտի վերջին հեկեկանքը:

Արամազդը հեռացաւ պատանի Ապոլոնի մօտից, նրա ականջից կըտորուեց նաև հեղեղատի նուազած ձայնը. նա անցկացաւ Ուրարդուի դաշտի վերայից և նստեց մշտադալար Լատոնսսի ստուերի տակ:

Այդ անսովոր լուսթեան և դատարկութեան մէջ աստուածների հայրը խոհում էր լուռ, երբ նրա աչքին ընկաւ մշտադալար դաշտի գոյնդգոյն ծաղիկների հոյլը: Նա մօտեցաւ Ուրարդուի դաշտի գեղեցիկ ու սպիտակափայլ շուշանին, կապոյտ ու գեղաշեայ մանուշակին փարզամ վարդին, գեղանի յասմի-

կին, քաղցրահոտ յափուկին և նրբանցից փունջ կապեց, ծովի մատաղահաս դիցունուն նուիրելու համար:

Յօղապատ մարգագետնի ծաղիկները բուրեցին իրանց արարչի ձեռքերի մէջ և նրա սիրտը լցրին մի անսահման ուրախութեամբ.

* * *

Արամազդը Քարբէյի անձաւում սպասում էր ծովի չքնաղ գիցունուն: Մանկամարդ կոյսը գեռ ևս չէր հասել գեղանի ամրոցին, երբ ծաղիկներն արդէն թառամել էին. բարի ասածու սիրտը լցունցաւ մի դառն ցաւով. նա նայեց ծաղիկերի վերայ ցաւակից սրտով և մօտեցրնելով իր շրթունքներին հոտ բա-

չեց... Բայց աւանդ, ծաղիկներն անհոտ էին որպէս վայրի բոյսերն ու մացառները: Իսկ աստուածների հօր կարեկից սրտի մէջ զարթեց մի նոր միտք, որը որոշելու էր ապագայ աշխարհի փառքն ու երջանկութիւնը: Այդ ժամանակ թառամած վարդի ու յասմիկի տերևներից մի քանիսը պոկուեցան ցողունից և օրօրուելով ընկան Արամազդի ոտքերի մօտ:

Բարի աստուածը հաւաքեց ծաղիկների թերթերը, նրանց դասաւորեց մայր երկրի վերայ և ասաց. — Ես չեմ կամենայ անհետք կորցընել բնութեան այն զարդարանքները, որոնք սէր ներշնչեցին նոյն իսկ Արամազդի սրտին... Եկ այս ծաղիկներից ստեղծենք մի էակ,

որը նրանց նման լինէր քնքոյշ ու գեղեցիկ, մաքուր ու անբիծ և որը սէր ներշնչէր հաւաոր աշխարհին»: Եւ նա օրհնելով ծաղիկներին նրանցից ստեղծեց մի աննման արարած, որի աչքերը վայլում էին մանուշակի թերթերի նման, ճակատն ու պարանոցը սպիտակ էին որպէս մարգարտափայլ շուշանը, շրթունքներն ու այտերը կարմիր էին գեղանի վարդի նման և ամբողջ իրանը քնքոյշ ու հրապուրիչ էր որպէս յասմիկի գեղադէմ ծաղիկը:

Աստուածները, որոնք լսելով նորաստեղծ արարածի մասին հաւաքուել էին Քարքէյի քարանձաւում, շրջապատած այն աննման էակին զմայլովում էին նրա գեղեցիկութեամբ: Ծովի դիցուհին նրա աչքերի

մէջ սկսեց որոնել անսահման կա-
պոյտը և ալիքներին ծփանքն ու
ահեղ որոտը. անտառի Փէան նը-
րանից առնում էր յաւերժական
անտառի երկնային բուրմունքը:
Պատանի Ապոլոնը նրա գեղգեղուն
ձայնի ելեէջից նիւթ էր ընտրում
իր քնարի համար: Հողմերի աստու-
ածը սքանչանում էր այն գեղա-
նի գանգուրներով, որոնք զարդա-
րում էին գեղեցիկ արարածի գը-
լուխն աւաւսերը և որոնք սրտերի
համար կարող էին առաջացնել մի
աւելի անաւոր փոթորիկ, քան ո-
րոտացող ծովի անխորտակելի ա-
լիքները... Իսկ սիրոյ չքնաղ դի-
ցուհին, ժպտալով նայում էր նրա
վերայ և կամաց շշնջում—«քեզ հա-
մար երջանկութիւն և փառք տը-


նօրինողը ես կը լինիմ»...

Արամաղղն այդ աննման արարա-
ծին անուանեց կ ի ն և յանձնեց
Քարէ լերան անձաւի տխուր մե-
նաւորին: Բարբ հայրը պատմեց
նրան կնոջ ստեղծագործութեան
պատմութիւնը և աւելացրեց.

—«Նա քնքոյշ է որպէս յասմիկը,
գեղեցիկ ու հրապուրիչ որպէս շու-
շանը և փարթամ ու հպարտ որ-
պէս վարդը, պաշտպանիր նրան
հողմերից ու արհաւիրքից որ չը
թառամի նա»...

—«Տէր, վրա բերեց մաախոհ Ա-
ուրհան, այդ բոլորը լաւ է շատ
լաւ, բայց միթէ այս հպարտ ծա-
ղիկը չունի իր վերայ վարդի ցո-
ղունը ծածկող այն անհամար փը-
շ երից, որոնք այնքան անգամ

1001 / 2305
16862-58



վիրաւորել են իմ մարմինն ու ձեռ-
քերը».

— «Փըշէ՛ր կային, մտախոհ կեր-
պով յեշեց աստուածների հայրը,
բայց դու Աուրան, նրանից—պաշտ-
պան» եւ իմ համար գործ դիր այն
ընդունակութիւնները որոնցով օժ-
տել եմ ես քեզ»:

Արամազդը այլ ևս երկար չմնաց
աշխարհում, նա թողեց զոյգ արա-
րածներին իրար մօտ, թողեց
աշխարհի գեղեցկութիւնները և
անյայտացաւ ջինջ ու անսահման
տարածութեան մէջ:



ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ ԹԱՂԻԿ

Գեղեցիկ Լատոնան օրօրվում էր
գեփիւռի մեղմ ալիքներով. նրա ան-
նման թերթերը ողողւած էին
մարգարտափայլ ցօղերով, իսկ հը-
պարտ գլուխը նմանում էր մի թագ
կապած աշխարհակալի:

Լատոնան սիրում էր գեփիւռը,
սիրում էր գիշերային ցօղը, սիրում
էր վաղորդեան արեգակի անզօր
ճառագայթների ցոլքը, որ անտա-
ռի Փէայի մօտից գալով՝ բերում
էր իրան մշտավառ սիրոյ յիշատա-
կը: Եւ Լատոնան հրապուրուած այս

ամենից իր շնաշխարհիկ աչքերը դարձնելով իր մօտից անցնող Վէներային, խնդրեց, որ իրան մշտատե ուղարկէ և մեղմ զեփիւռը, և գիշերային ցօղը և վաղորդեան արեգակի ճառագայթները:

— «Մշտատե՞, հարցրեց Վէներան երջանկութեան ծաղկին. բայց միթէ կայ մէկը իմ սիրուն Լատոնա, որի համար մշտատե լինէր երջանկութիւնը»:

«Քայց ես, զիցուհի սիրում եմ կեանքը, սիրում եմ ապրել... և դու մի զրկէ ինձ նրա բարիքներից»:

Եւ բարի Վէներան զիջանելով նրա աղերսանքին ընտրեց նրա համար ամենաերջանիկ վայրը—մատաղ կոյսի սիրտը, ուր ամեն օր գնում էին զովացնելու հրապոյրի զեփիւ-

ռը, և ջերմացնելու—մատաղ սիրոյ ճառագայթները:

* * *

Լատոնան բացուեց փթթեց իր նոր բնակութեան վայրում. նա սովորականից աւելի ուրախ դարձաւ, որովհետեւ նրանից անպակաս էին և հրապոյրի զեփիւռը և մատաղ սիրոյ ջերմացնող ճառագայթները: Նա ամեն մի ժամ գոհութիւն էր յայտնում Վէներային իրան կամեցած բարիքի համար: Եւ այդպէս անցկացաւ մի քանի ժամանակ: Իսկ բարի Վէներան բոլովին մոռացաւ իր սիրունիկ Լատոնային...

* * *

Գարնանային գեղեցիկ օրերից

մէկն էր, երբ Վէնեւրան Դիանայի
և Նայիտի հետ միասին անցնում
էր Ամփրոնի ապարանքի մօտով, երբ
աւազոտ ծառուղու վերայ նկատեց
իր սիրունիկ Լատոնային գեղնած
և թառամած:

— «Խնչպէս, այս դու ես Լատո-
նա. դու այստեղ և այս դրութեան
մէջ», հարցրեց զարմացած դիցուհին
Երջանկութեան ծաղկին:

— «Ես եմ, դիցուհի, քո սիրած
Լատոնան», — հազիւ լսելի ձայնով
թոթովեց Երջանկութեան ծաղիկը:
«Բայց ի՞նչպէս»... նորից հարց-
րեց դիցուհին:

«Այնտեղ, ուր դու ինձ ուղար-
կեցիր, շատ կարճ եղաւ իմ երջան-
կութիւնը դիցուհի, կոյսի սրտից
շատ շուտ անայտացաւ զեփիւռը,

էլ չ'ցոլացին ջերմացնող ճառա-
գայթները... Այնտեղ տիրեցին խա-
ւարն ու ցուրտը, լոյսն ու ջերմու-
թիւնը աներեակայելի դարձան ինձ
համար... և այս բոլորից յետոյ ինձ
դէն քցեցին, ահա այս գրութեան
մէջ»:

Վէնեւրան շատ ափսոսաց, վերցը-
րեց գեղեցիկ Լատոնային, գգուեց
և նորից տարաւ յանձնեց զեփիւ-
ռի մեղմ ալիքներին, մարգարտա-
փայլ ցօղերին և վաղորդեան արե-
գակի ճառագայթներին:

Բայց Երջանկութեան ծաղիկը
այս անգամ այլ ևս չ'կենդանացաւ,

և մի քանի օրից յետոյ բոլորովին
թառամեց և չորացաւ...

ԱԳԱՄԷՏԱՅԻ ՍԷՐՁ

— «Գնահ իմ բարի Փալօնիա, շտապիր աշխարհ, գտիր գեղեցիկ Ագամէտա կոյսին և մխիթարիր նրան»։ այսպէս ասաց Աստղիկ դիցուհին դառնալով դէպի իր գեղեցիկ ու մանկամարդ յաւերժահարսը, որը դեռ նոր էր վերադարձել սրբազան անտառի նուիրական անձաններէց։ Երկրային կոյսը շատ է տանջվում, աւելացրեց դիցուհին, սփոփիր և փարատիր նրա ցաւերը»։

— «Բայց ի՞նչ է նրա տանջանքի պատճառը», հարցրեց դեռավթիթ

Փալօնիան, թափահարելով իր գեղեցիկ ու ձիւնափայլ թևերը։

— «Սէրը, իմ բարի Փալօնիա։ Երկու օր առաջ ես նրան տեսայ Նանէական մհհեանում, ուր դառնագին լալիս ու ողբում էր նա։ Խեղճը սիրում է մէկին... և ես չեմ կամենայ, որ մի մանկամարդ կոյս այդքան անողորմ կերպով տանջուի սիրոյ նետերից։ Գնա և իմացիր թէ թնչպէս կարելի է ամօրել երկրային կոյսի սիրտը և մխիթարել նրա վշտացած ժամերը»։

Փալօնիան թափահարեց իր գեղեցիկ և սպիտակափայլ թևերը և կտրելով երկնային ջինջ կապոյտը, հասաւ աշխարհ... Մուլթն էր, երբ նա իր ոտքը դրեց այն շէմքի վերայ, որի յարկի տակ գտնվում էր

Ագամէտա կոյսը:

Քնքոյշ յաւերժահարսը ներս մը-
տաւ կոյսի առանձնասենեակը այն
բոպէին, երբ նա զարդարում էր իր
ոսկեգոյն մագերի գեղեցիկ խոպուպ-
ները. և գեւափթիթ աղջիկը լսելով
երկնային պատգամի թեքի շըշն-
ջիւնը յետ դարձաւ և տեսաւ բարի
Փալօնային...

— «Դ՞նձ ես, աննմանդ Փալօնիա,
գոչեց Ագամէտա կոյսը և փարուե-
ցաւ նրա պարանոցին... Ընչպէս,
բեզ ո՞վ ուղարկեց ինձ մօտ, գեղե-
ցիկդ իմ»:

— «Սիրոյ գիցունին, պատասխա-
նեց յաւերժահարսը:

— «Եւ ինչի՞ համար»:

— «Քեզ սփոփելու համար, գեղե-
ցիկ Ագամէտա. բարի գիցունին կա-

րեկցեց քո վիճակին և հրամայեց
իմանալ թէ Ընչպէս կարելի է ա-
մօքել իր սիրած Ագամէտայի վըշ-
տացած սիրտը»:

— «Իմ սիրտս վշտացած չէ բարի
Փալօնիա».

— «Քայց սիրոյ գիցունին նանէ-
ական մեհեանում լսել է քո սրտի
հառաչանքը. դու վշտացած սրտով
պատմել ես քո սէրը... Միթէ չես
սիրում մէկին»

— «Սիրում էի», սառնասրտու-
թեամբ պատասխանեց կոյսը վար
կախելով իր գեղեցիկ աչքերը:

— «Իսկ մի՞տմ»:

— «Այժմ սիրտս դատարկ է»...

Փալօնիան այլ ևս ոչինչ չասաց.
նա մտախոհութեամբ թողեց կոյսի
առանձնասենեակը և թեքը թա-

փահարելով նորից բարձրացաւ դէ-
պի երկինք:

Ջինջ ու անհուն երկնային տա-
րածութեան մէջ լավում էր միայն
դիցունհու յաւերժահարսի թեւերի
թափահարիւնը, որ անկանգ սը-
լանում էր դէպի սիրոյ դիցունհին:
Վշտացած յաւերժահարսը հասաւ
երկինք և իր գեղեցիկ գլուխը կախ
քցած, կանգնեց դիցունհու առջև
լուռ ու մտախոհ...

— «Մխիթարեցի՛ր կոյսին, բարի
և գեղեցիկ Փափօնիւ, հարցրեց
Աստղիկը, մի զարմացած հայեացք
քցելով իր այլայլուած յաւերժահար-
սի վերայ:»

— «Նա մխիթարութեան կարօտ
չէր, իմ ողորմած դիցունհի, թո-

թովեց գեղեցիկ յաւերժահարսը. և
միթէ կարիք կար բժշկելու այն
սիրտը, որը վիրաւոր չէ»:

— «Ի՞նչպէս, միթէ նա չէր, որ
գիշեր ու ցերեկ տանջվում էր մէ-
կի սիրով» —

— «Տանջուել է...»

— «Յետո՞յ...»

— «Եւ նորից մոռացել է... նրա
սիրտը իր վերայ չի կրում այն խո-
րունկ խոցերից գոնէ մէկը, որ ա-
ռաջանում է կամակոր ամուրի նե-
տերի հարուածներից»:

— «Մօռացել է, և այսքան շո՛ւտ...
Ժանը կերպով արտասանեց դիցուն-
հին. ուրեմն նրա համար այդքան
կարճատե էր երկնային զգացմուն-
քի բաղդաւորութիւնն ու տանջան-
քը: Թո՛ղ այդպէս լինի: Իսկ դու

իմ բարի Ֆալօնիա, շարունակեց
 դիցունհին երկարատև լուսթիւնից
 ետոյ, նորից շտապիր աշխարհ, և
 ասա բոլոր այր մարդկանց, որ ես,
 այսօրուանից սիրոյ առաջ և
 փաղտեմ եմ կանանց սըր-
 տերը»...



ՅԱԼԻՆՈՍ ԲԱՆԱՍՏԵՂԺԸ

Վշտացած և ծերացած Յալինո-
 սը բոլորովին թողել էր իր քնարը.
 նա կարծես մոռացել էր իր նուի-
 րական կոչումը և նրա սրբազան
 հայրենիքի ոչ վիշտը և ոչ էլ բեր-
 կրութիւնն ու ուրախութիւնը չէին
 ոգեւորում նրա ամայացած սիրտը:
 Ծերունի բանաստեղծի քնարը լռել
 էր իր գիւթական մրմունջն ու ա-
 ղաղակը և հայոց աշխարհը այլ ևս
 զուր էր սպասում նրա ոգևորող
 ձայնի աննման դայլայներին:
 Այսպէս անցկացան տարիներ և

ծերունի բանաստեղծի քնարը ար-
ձագանք չ'տուեց ոչ հայրենի դաշ-
տերի մէջ տեղի ունեցած ահեղ
մարտերի գրոհներին և ոչ էլ վըշ-
տացածի հեկեկանքին: Նա չ'սրբեց
տանջուողի աչքերից արտասուքը և
չը հեռացրեց վիշտը տառապողի
սրտից:

Բայց թէ ինչի՞ էր լուռ հայոց
աշխարհի անդրանիկ բանաստեղծը՝
այդ ոչ ոք չ'գիտէր:

* * *

Ասքանազեան երկրի ուրախ և
անհոգ օրերից մէկն էր, երբ սիրոյ
դեռափթիթ Աստղիկ դիցունհին թո-
ղեց Աստղօնը լեւրան ապարանքը և
բարձրացաւ դէպի երկինք: Նա կա-
մենում էր ներկայանալ պատանի

Ապոլոնին: Բանաստեղծութեան և
քնարի աստուածը լսելով սիրոյ կոյ-
սի գալուստը, ընդ առաջ դուրս
եկաւ:

— «Ո՛ր, աննմանդ Ապոլոն, խօսեց
դիցունհին, ինչի՞ համար այսքան եր-
կար ժամանակից 'ի վեր լուռ է
հայոց բանաստեղծի քնարը... այն
տեղ չի հնչվում ոչ սգի բամբուռ
և ոչ էլ սիրոյ հեշտալար դալայլը:

— Մի՞թէ սիրոյ երկապագունե-
րի սրտերը չպէտքէ լցնել երկրա-
յին զգացմունքների և մտքի անուշ
հրապոյրներով»...

— «Պէ՛տք է, բարի դիցունհի, ա-
նուշ ժպիտով պատասխանեց Ապո-
լոնը. բայց հայոց բանաստեղծը վա-
ղուց արդէն ծերացել է և ոչ մի
ուրախութիւն ու տանջանք արձա-

գանը չեն գտնում նրա սրտի մէջ»:

— «Ի՞նչպէս Տէ՛ր, մի՞թէ հնարաւոր բան է, որ կենդանի սիրտը շունենար իր բարախն ու խանդը, իր սէրն ու տանջանքը: Եթէ Հայոց բանաստեղծի լուսթեան պատճառը միայն այդ է, ես նրան ոգեւորելու համար կը գործադրեմ այն միջոցը, որը ամենակատարեալն է»...

— «Եւ ո՞րն է այդ միջոցը»:

— «Նրան ոգեւորելու համար ես աշխարհ կուղարկեմ իմ յաւիտահարմաներից մէկին աշխարհի ամենագեղեցիկ կոյսին»:

Պատանի աստուածը հասկացաւ սիրոյ դիցունու միտքը:

— «Արա՛ւ ինչպէս կամենաս, գեղեցիկ դիցունի, տւելացրեց նա,

թող սիրոյ տաճարից անվերջ լըսուի և սիրոյ աղօթքը»:

— «Կոյսը անուշ ժպիտով հեռացաւ պատանի աստծու մօտից և նոյն օրն և ետ աշխարհ ուղարկեց իր գեղեցիկ ու աննման Ասպրամ յաւերժահարսին, որը Հայոց գիւցաղներից մէկի դուստրն էր:

Նանգական մեհեանի դուան մօտ Յաւինոսը տեսաւ երկնապետի կոյսին, և սրտի անուշ բաբախով նայեց նրա վերայ ու ժպտաց:

* * *

Նաւասարդեան տօնի օրն էր: Բոլոր աստուածները հաւաքուած էին Աստղօնք լեռան վերայ, Այնտեղ էին Արամազդը, Ապոլոնը, Անահիտը, Աստղիկը, Նանէն Տիրը և չէ-

րան: ներկայ չէր միայն գրողը, որը դեռ ևս զբաղուած էր Վասպուրականի դաշտերի մէջ տեղի ունեցած ահեղ ճակատամարտում ընկած հերոսների անուններով: Հայոց աշխարհը հրճվում էր իրեն պարզուստ անհամար բարիքներով և բիրաւոր ժողովուրդը հրի և ծխի ալիքների հետ իր օրհնութիւնն էր վերառաքում բարիքների պարգեւովին:

Քայց ո՞վ զարմանք, այնտեղ էր նաև Հայոց ծերունի բանաստեղծը, որը իր քաղցրաձայն քնարի լարերին խփելով գովում էր Հայոց աշխարհի ամենագեղեցիկ կոյսի դիւթական գեղեցկութիւնն ու անմեղութիւնը. և ուշաթափ ամբոխը, չըջապատած նրան ապշած լսում էր

այն ոգևորութիւնն ու խանդը, որ դուռ էր թափվում ծերունի բանաստեղծի սրտից:

Այդ ժամանակ, սրբազան լեռան վերայ, սիրոյ դիցուհին մօտեցաւ Ապոլոնին և կամաց շշնջաց. —

— «Տես բանաստեղծների հայր, ծերունի Յաւինոսը գովում է սէրը և նրա երկնային երջանկութիւնը, իսկ նրա սիրտը լիքն է անսահման ոգևորութեամբ»:

— «Տեսնում եմ գեղեցիկ դիցուհի ասաց Ապոլոնը, և շնորհակալ եմ քեզանից, որ դու բանաստեղծութեան աստծուն յիշեցրիր այն միջոցը, որով կարելի է կեանք և ոգևորութիւն ներշնչել մինչև իսկ ծեր և լքքեալ բանաստեղծներին:

Դիցունք և Ապոլոնը կանգնած
 երկար ժամանակ լսում էին Հայոց
 քանաստեղծի անուշ երգը... և այդ
 օրուանից ի վեր բարի Ապոլոնը
 տանջուող և լուռ քանաստեղծնե-
 րին ոգևորելու համար, ամեն ան-
 գամ աշխարհ է ուղարկում մի երկ-
 րային կոյս, օժտուած սիրոյ, գե-
 ղեցկութեան և անմեղութեան հը-
 րապոյրներով...



ԵՐԿՐԱՅԻՆ ԵՐԳԸ

Ամեն առաւօտ, արշալոյսի ոսկէ
 շողերի հետ գեղատեսիլն Ապոլոն
 դուրս էր գալիս Աստղիկ գիցունու
 Հնաշխարհիկ անձաւից և նուագում
 էր սիրոյ յաւերժական երգը: Եւ
 պատանի ասածու քնարի ձայնը
 արձագանք գտնելով դիցունու կու-
 սական անտառների մէջ հասնում
 էր շատ հեռուն, մինչև նանէական
 մեհեանը, ուր ամեն օր աղօթելու
 էր գնում Դիսանիա պատանին:

Զմայլուած և կախարդուած պա-
 տանին ամեն օր ականջ էր գնում
 սիրոյ յաւերժական երգին, որ լուս-

նի շողերի չափ մեղմադձոտ էր, երկնային ծիածանի պէս մաքուր և կոյսի շնչի նման անուշ ու հեշտալուր...

Բայց շատ չանցած երաժշտութեան աստուածը թողեց կոյսի անձաւը և հեռացաւ գէպի երկինք, իսկ գեղեցիկ Գիսանիան զրկուեցաւ նրա անուշ քնարի հեշտալուր ձայներից:

Այդ օրուանից խոհուն պատանին ամեն օր գայիս և նստում էր Սիմնայի մշտադալար սօսիների տակ և շունչը կտրած ականջ էր դնում թէ երբ պէտք է հնչէ երկնային քնարի անուշ մրմունջը... Բայց Ապոլոն հեռու էր նրանից և պատանին երկրի վերայ այլ ևս զուր էր որոնում երաժշտութեան աստծու քնարի դայլայլը...

* * *

Մի օր Ապոլոն նոր էր մօտենում դիցունու գեղատեսիլ անձաւին, երբ պատանի Գիսանիան նրան ներկայանալով ասաց. —

— «Աննմանդ Ապոլոն, դու զրկեցիր ինձ քո անուշ քնարի դիւթական ձայներից... ինձ որ մի ժամանակ յափշտակուած լսում էի նախական մեհեանի մօտ: Ո՛հ, աշխարհի գուհիկ ձայները չեն գըրաւում իր սիրտը և չեն նրբացնում իմ լսելիքը... և այսուհետեւ, այս աշխարհի մէջ քո դժբաղդ Գիսանիայի համար էլ ո՞վ պիտի նուագէ յաւերժական սիրոյ թովիչ երգը»...

— «Օ՛, Գիսանիա, ժպտաց Ապո-

լոն, մի՞թէ քո ականջին դեռ չեն հասել հրապոյրի գալայլը, հեշտասիրութեան մըմունջը, պաշտամունքի աղօթքը և երջանկութեան աղաղակը»:

«Երբէք Տէր, մի՞թի երկրային երգը կարող էր այդքան հրապուրանք և վայելչութիւն պատճառել իմ սրտին»...

—«Անշուշտ, ասաց Ապօլոն և առնելով իր հետ գեղեցիկ պատանուն, ներս մտաւ դիցունհու անձաւը, ուր նոր էր հիւր եկել Հայոց Կատագորա մատաղ քրմուհին: Ապօլոն գեղեցիկ պատանու գլուխը մօտեցրեց երկրային կոյսի չքնաղ և աննման կրծքին և Գիսանիան յափշտակուած և զմայլուած լսեց այն ձայները, որ հնչվում էին գեղատեսիլ

աղջկայ սրտի խորքերից:

* * *

Հեռացաւ Ապօլոնը... անցան երկա՛ր տարիներ, իսկ գեղեցիկ Գիսանիան իր ականջը դրած երկրային կոյսի դեռափթիթ կրծքին, լսում էր հրապոյրի մեղմագին դայլայլը, հեշտասիրութեան մըմունջը և սիրոյ ու երջանկութեան գըռգիռների հեշտալուր աղաղակը... Նա բոլորովին մօռացաւ երաժշտութեան աստծու քնարի անուշ մըրմունջները և նրա զատարկ ու ամայի սիրտը գտաւ աշխարհի մէջ իր վայելչութիւնը...



ԱՆՓՈՐՁ ՕՐԷԱԳԱՆ

— «Օրէնդա, իմ գեղեցիկ յաւերժաբարս, իջիր աշխարհ, և գտիր ինձ համար երկու երկրային կոյսեր, որոնք երբէք չը կամենային նայել մահականացուի երես, ասաց Անահիա դիցուհին, գառնալով գէպի իր շքնաղ ու աննման յաւերժաբարսը: — «Ես զրկելով նրանց երկրային բաղդաւորութիւններից, կամենում եմ պատրաստել մշտնջենական փառքի և յաւիտենական բաղդաւորութիւնների համար: Ո՛հ, այս ի՞նչ աննախանձելի արարած է կինը, նրա հոգին անընդունակ է հետեւել

կեանքի թռիչքին, իսկ սիրտը անզօր է դիմադրելու խոր զգացմունքների յուզիչ հարուածներին»:

— «Միայն երկուսը, բարի դիցուհի... և դու կարծում ես թէ քո Օրէնդան չ'պէտք է կարողանայ գտնել աշխարհի մէջ փափկասիրտ կոյսեր, որոնք իրանց հոգու թռուիչքներով և սրտի յոյզերով գերազանցէին նոյն իսկ տղամարդկանց»:

«Չեմ կարծում»...

Օրէնդան գնաց. իսկ դիցուհին անհամբերութեամբ սպասպում էր թէ երբ կը վերադառնայ իր յաւերժաբարսը:

Այսպէս անցկացան օրեր և ամիսներ Օրէնդան, չէր վերադառնում, իսկ Անահիտը անհամբերութեամբ

սպասում էր իր անփորձ ու անմեղ
յաւերժահարսին...

* * *

— «Մենակ վերադարձար Օրէա-
դա, իսկ ո՛ւր են երկրային կոյսերը,
հարցրեց զիցունհին, մի անուշ
հայեացք քցելով իր տխուր և
մտախոհ յաւերժահարսի վերայ երբ
սա կանգնելով զիցունու առջև, տա-
կաւին չէր համարձակվում բարձրա-
ցնել իր աչքերը:

— «Այո՛ զիցունհի, մենակ վերա-
դարձայ պատասխանեց յաւերժա-
հարսը»:

— «Եւ շատ որոնեցիր»...

«Չատ չատ»...

— «Եւ չ'գտար գոնէ մէկը, որ
համաձայնուէր փառքն ու յաւիտե-

նականութիւնը աւելի բարձր դա-
դասել քան երկրային երջանկու-
թիւնը»:

— «Այո՛, ես ծայրէ ծայր անցկա-
ցայ ամբողջ աշխարհը և հաղիւ էի
գտել մէկը, որն ուզում էր հետե-
ել ինձ...»

— «Բայց ինչի՞ չ'հետեւեց»:

— «Որովհետեւ հէնց այն ըոպէին
երբ մենք միասին պէտք է բարձրա-
նայինք ջինջ կապոյտը, կոյսի մօտ
եկաւ սիրոյ զիցունու յաւերժահարս
Իրիզան և առաջարկեց աղջկան տալ
իւր ձեռքը մի գեղեցիկ մահկանա-
ցուի»:

— «Եւ նա համաձայնուեց, այն-
պէս չէ՞, գեղեցիկ Օրէադա»:

— «Համաձայնուեց»:

— «Իսկ ո՞վ էր այն մահկանացուն»:

—«2'գիտեմ,բայց ասացին որ նա Աստղիկ գիցուհու սիրելին էր... իսկ ինձ տիրուհի, այնչափ զայրացրեց գրեթե կոյսի արարքը:

—«Ի զո՞ւր, բարի Օրէագա, նը-
րանց արարմունքի վերայ պէտք է
ցաւիլ և ո՛չ թէ զայրանալ: Գնան և
մի մօռանայ, որ կանանց ոգիներ
ըը ընդունակ չեն թռիչքների, իսկ
սրտերը անգօր են գիմագրելու
խոր զգացմունքների առաջացրած
տանջանքներին...

VII

ՔՆԱԾ ՀԻՐԱԳԱՆ

— «Գնան Գուատագա, իջիր աշխարհ
և շտապով ինձ մօտ բեր հէրագա
կոյսի մաքուր ու անմեղ հոգին, ա-
սաց Ադուա աստուածը, դառնալով
իր մահուան հրեշտակին, որ դեռ
նոր էր վերագարձել մահնական
պաշտամունքների սրբավայրերից:

Եւ Գուատագան շտապեց աշ-
խարհ... Գիշերային խաղաղութեան
մէջ լսուեց նրա թևերի շշնջիւնը,
որ կտրելով անցնում էր երկնքի
անհուն տարածութիւնը: Այսպէս
անցկացաւ քնած աշխարհի մէկ
ծայրից միւսը և գտաւ չքնադ ու

աննման հէրադային: Կոյսը քնած էր, երբ մահուան հրեշտակը իր սառն հայեացքով նրա սնարին մօտեցաւ... և զմայլունով նիրհող կոյսի չքնաղ և անմեղ կերպարանքից՝ կանգ առաւ և երկար ժամանակ սկսեց դիտել զեղատեսիլ աղջկայ շնչի հետ բարձրացող ու իջնող կուրծքը, վարդի պէս բացուած կարմիր ու նուրբ շթունքների հրապուրանքն ու փայլը և խուփ աչքերի վերայ թափալորող անմեղութիւնը...

Եւ հրեշտակը զմայլուած այս ամենից, անյազ դիտում էր քնած աղջկան. ապա նա երկիւղածութեամբ մօտեցաւ երկրային կոյսին համբուրեց նրա կիսաբաց շրթունքները, և թեքըր թափահա-

րելով լուռ ու մտախոհ նորից սըլացաւ զէպի երկինք:

* * *

— «Մենակ ես, Գուատադա, իսկ ուր է հոգին, շտապով հարցրեց Ադուան, զարմանալով իր հրեշտակի մտախոհութեան և տրտմութեան վերայ:

— «Տէ՛ր, ներիր ինձ, մենակ վերադարձայ, թոթովեց մահուան հրեշտակը... ես չ'յանդգնեցայ...

— «2'յանդգնեցար կատարել իմ հրամանը»:

— «Ես չ'յանդգնեցայ մօտենալ նիրհող կոյսին. նա քնած էր երբ ես մօտեցայ նրա սնարին: Ո՛հ, նա այդ ըոպէին այնքան գեղեցիկ էր, այնքան անմեղ ու անաբատ, որ ես

զմայլուելով այդ ամենից սիրտս մի
կարեկցութեամբ լցուեցաւ դէպի
նա: Ես յետ դարձայ խնդրել քեզ,
խնայել նրան իր կեանքը...

Աշխարհի մէջ ոչ մի տեղ չեմ
տեսել այնքան մաքուր անմեղու-
թիւն, որքան տեսայ նրա փակ աշ-
քերի վերայ. ոչ մի բուրմունք այն-
քան քաղցր և արբեցուցիչ չէ, ինչ-
պէս նրա կարմիր ու նուրբ շըր-
թունքներից հնչուող մեղմ շունչը:
Ո՛հ, տէր, որքան անշուք կը մնար
աշխարհը առանց նրան»...

— Ո՛հ, Գուատադա, քեզ վայել
չէ այդքան հրապուրուել երկրային
գեղեցկութեամբ, ասաց Ադուան.
Ընչ, դու կամենում ես գեղեցկին
անմահութիւն պարգևել... այդ ես
կանեմ. թող աշխարհում անմահ

լինի նրանց յիշատակը իսկ նրանց
հոգիները ինձ հարկաւոր են եր-
կնքի գեղեցկութեան համար... Այս
անգամ քեզ եմ ընծայում չքնաղ
Հէրադայի հոգին, բայց դու գնա և
նրա փոխարէն բեր ինձ մի այլ
մահկանացու:

* * *

Գուատադան նորից թափահարեց
իր գեղեցիկ թևերը և ուրախ ու
զուարթ աշխարհ իջնելով աննման
Հէրադայի փոխարէն տարաւ Ամա-
նոր պատանուն, որ երկար տարի-
ներից ի վեր տանջվում էր նոյն
դեռափթիթ ու մանկամարդ Հէրա-
դայի հեշտագեղ սիրով:

Իսկ այդ օրուանից 'ի վեր ար-
դարադատ Ադուան ամեն անգամ,

փափկասիրտ հրեշտակի փոխաբէն
աշխարհ էր ուղարկում ծերունի Լա-
ունային, երբ իրեն հարկաւոր էին
լինում շքնաղ ու անմեղ հոգիներ...

VIII

ՀԵՐՏՐՈՒԿԱՅԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

— «Երգի՛ր աննմանդ Ապօլոն, եր-
գի՛ր սիրոյ յաւերժական երգը. ա-
սաց Հէրարուդա յաւերժահարսը ե-
րաժշտութեան պատանի աստծուն
երբ նրանց մակոյկը ճեղքելով անց-
նում էր լուռ ու հանդարտ Ատրի-
ականի ալիքների վերայով: Իսկ այդ
ժամանակ յափշտակուած Ապօլոնը
խաղաղ ու հանդարտ ծփանքների
հետ միասին լսում էր նաև կոյսի
սրտի խորհրդաւոր և յուսահատ բա-
բախը, որը նման էր օրհասական
սրտի վերջին հառաչանքին:

Փայլուն ալիքները, հանդարտ ծո-

վի երկնային նազը և հեռաւոր վայ-
րերից եկող բարակ ու մեղմադձոտ
զեփիւռը ընկղմեցին պատանի աս-
տծուն իրանց երկնային սքանչե-
լիքների մէջ, որը ոսկեղէն քնարի
ներդաշնակութեամբ երգեց ծովի
յաւերժահարսների սիրած հեշտա-
լուր երգը:

Յափշտակուած յաւերժահարսը
մի արտասովոր բերկրութեամբ լը-
սում էր իր սրտին այնքան մօտ
սիրոյ՝ մրմունջը, որ խառնուելով
քմահաճ ալիքների ծփանքների հետ,
իւր սրտին պարգեւում էր մի անսովոր
ու անուշ բարախ, կրքերի մի ար-
տասովոր աղաղակ...

— «Գեղեցիկ է երգդ, անմահդ
Ապոլոն, նորից խօսեց ծովի շքնաղ
յաւերժահարսը, գեղեցիկ են ալիք-

ների ներդաշնակութիւնն ու ոս-
կեգոյն ճառագայթների հանդարտ
լաղը, բայց այս ամենից աւելի գե-
ղեցիկ ես դու, ո՛վ պատանի աս-
տուած: Ապոլոնը ժպտաց և մի կա-
րեկից հայեաց գցելով կոյսի վերայ
ընդհատեց անուշ երգը:

Նրանք լռեցին. բայց լուռ չէր
հանդարտ զեփիւռը, լուռ չէին գե-
ղածիծաղ ծովի ալիքները... Նրանք
յիշեցնում էին անցած օրերի քաղ-
ցըր յիշատակները, որոնք աւելի ա-
հաւոր էին քան ամեն մի խօսք ու
երգ...

* * *

Իրիկնագէտ, հեռաւոր ճառագայթ-
ների մնաս բարեւ հետ միասին,
մակոյկը վերադառնում էր դէպի

յետ: Արեգակի աղօտ շողերը ցու-
լում էին հանդարտ ալիքների վե-
րայ: Նրանք նման էին մահամերձ
մարդու աչքերի փայլին, որի մնաս-
քալը յաւիտենական է...

Այդ ժամանակ պատանի աստուա-
ծը իր գանգրահեր գլուխը հանգ-
չեցնելով յաւերժահարսի շքնաղ և
զարդարուն կրծքի վերայ տխուր
ու մտախօհ շշնջաց.—

«Գիտե՛ս, աննմանդ ճէրարու-
ղա, այնպէս, ինչպէս երկնքի ճա-
ռայթները հրաժէշտ կտան գեղա-
ծիծաղ ծովի ալիքներին, ինչպէս
մեղմաձայն կոհակը անուշ համրոյր-
ներով կը հեռանայ մշտադալար
ծովափից և կը գնայ ու կանայտա-
նայ ծովի հեռաւոր խորքերում, այն-
պէս էլ շուտով հրաժեշտ պէտք է

տան իրար մեր զգացմունքները և
գնան ու կորչին յաւիտենակութեան
մէջ»...

— «Ի՞նչպէս, աննմանդ Ապոլոն,
անյայտանալ յաւիտենականութեան
մէջ և այն էլ շուտով, ա՛, ես քեզ
չեմ հասկանում:

— «Այո՛ իմ շքնաղ ճէրարուղա,
այդպէս է երկնքի տիրոջ կամքը.
ամեն մի երջանկութիւն ունի իր
խաւար գիշերը... Իսկ մեզ համար
արդէն հասել է այդ տխրագին վայր-
կեանք»...

Յաւերժահարսը այլևս ոչինչ չա-
սաց. պատասխանի փոխարէն նրա
աչքերից գլորուեցան արտասուքի
մի քանի կաթիլներ և ընկան լայ-
նածաւալ ծովի մէջ...

Մակոյկը կանգ էր առել գեղա-

տեսիլ ամի մօտ. գեղեցիկ յաւեր-
ժահարսը կռնթած պատանի աս-
տծու ուսերին ամի բարձրացաւ: Այդ
ժամանակ մանկամարդ կոյսի աշ-
քերից արտասուքի մի քանի կա-
թիլներ ընկան նաև ծովափի ծա-
ղիկների և բոյսերի վերայ...

Ջգացուած Ապոլոնը իր այրուած
սրտի ծարաւը յագեցնելու համար
կռացաւ և ծովից մի քանի կաթիլ
ջուր վերցրեց... բայց լինշ, ջուրը
դառն էր, դառը որպէս կոյսի ար-
տասուքը... իսկ ծովափը ուր ըն-
կան յաւերժահարսի արտասուքի
կաթիլները, չորացաւ, ծածկուե-
ցաւ աւազով և դարձաւ մի անա-
պատ...



ՎԱՐԴ ՈՒ ՄԱՆՈՒԾԵԿ

Գեղեցիկ էր Աստղիկ գիցուհու
Քարքէ լերան ստորոտում ունեցած
անձաւը. բայց աւելի աննման և
հրապուրիչ էր գիցուհու պարտէզը,
ուր ամեն օր երկնային կոյսը գը-
նում էր զբօսնելու, շրջապատուած
իր գեռափթիթ նաժիշտներով:
Մարմարէ շատրուանի ջինջ ջուրը
ցօղում էր անհամար ծաղիկներին,
որոնց հաւաքել էր մանկամարդ գի-
ցուհին գեղեցիկ աշխարհի բոլոր
կողմերից: Արեգակի առաջին ճա-
ռագայթների հետ կոյսն իջնում էր
պարտէզ և սրտի գոհունակութեամբ

անցնում էր այն մշտադալար ծառուղիների միջից, որոնց աջ և ձախ կողմերում բացվում ու բուրում էին վարդն ու մանուշակը, յափրուէն ու յասմիկը և նարդոսն ու շուշանը:

Գեռափթիթ գիցուհին այդ ամենը տեսնելով յիշում էր Արամազդին, որ իր անքննելի զօրութեամբ զարդարել էր գեղեցիկ աշխարհը հաղաբաւոր հրաշալիքներով...

Դիցուհին, մի օր սովորականի նման անցնում էր սօսիների գեղեցիկ ծառուղիներով, երբ յանկարծ դարձաւ իր նաժիշտներից դէպի գեռատի նեկտարն ու ասաց.

— «Տե՛ս, կոյս, միայն քո աչքերը չեն, որ այնքան խարտեաչ և գեղեցիկ են. նրանց նման փայլում է նաև այն չքնաղ մանուշակը: Ապա

դառնալով դէպի նազելի Ամասֆէրան, դիցուհին շարունակեց. «Խսկ այն նորաբաց վարդը նման է քո շրթունքներին իմ գեղեցիկ Ամասֆէրա, վարդ և կոյսի շրթունք,— երկուսն էլ ստեղծուած են սիրոյ համար»:

* * *

Գարնանային գով օրերից մէկն էր, երբ գիցուհին թողնելով իր գեղեցիկ անձաւը, հեռացաւ դէպի Անահտի ապարանքը: Նրա ուրախ և անհոգ նաժիշտները սովորականի նման իջան պարտէզ և երգեցին մշտադալար սիրոյ աննման երգը:

Քայց ուրախ չէին նեկտարն ու Ամասֆէրան. նրանք առանձնացած դալարախիտ ծառերի ստուերների

հէջ և ոչ սէրը, ոչ էլ նրա հեշտա-
յուր երգերը գրաւեցին նրանց ա-
մայացած սրտերը:

Օրը մթնեց. երեկոյեան արեւի
ճառագայթները ոսկէ շողերով ներ-
կեցին դալար բոյսերի և դարեւոր
մայրիների մէջ թաղուած անձա-
ւը... բայց նրա գեղածիծաղ շողե-
րն ընկնելով մեծ ծառուղու վերայ՝
չգտան այնտեղ գեղեցիկ վարդն ու
խարտեաչ մանուշակը... նրանք այլ
ևս չկային:

Բայց թէ ով էր քաղել զիցունու
անդրանիկ ծաղիկները, կամ թէ
ո՛ւր էին նրանք — ոչ ոք չ'գիտէր...

* * *

— «Ո՛ր, կուտանք, ո՛ւր են իմ սի-
րած ծաղիկները, գառնալով դէպի

իր նաժիշտները բարձրաձայն գո-
չեց զիցունին, երբ անցնելով սօ-
սիների ծառուղու մօտից՝ չ'տեսաւ
իր սիրած վարդն ու մանուշակը:
Դիցունին հրամայեց որոնել նրանց,
և նա՝ ով առաջինը կը բերէ իրան
գեռափթիթ ծաղիկները, կարժա-
նանայ հայոց աշխարհի ամենագե-
ղեցիկ զիւցազնի սիրոյն:

Թափանցիկ ու նուրբ շղարշների
չնչիւնով նաժիշտները վազեցին ո-
րոնելու զիցունու սիրելի ծաղիկնե-
րը... բայց ո՛վ զարմանք, շատ չան-
ցած՝ մօտեցաւ նրան էլէօնորա յա-
ւերժահարսը, որը իր ձիւնափայլ
շղարշի գոգով բերում էր գեղնած
ու չորացած ծաղիկները: Նրանց
անկարելի էր ճանաչել. վարդի գե-
ղեցիկ թերթերը չորացել և գեղ-

նել էին, իսկ մանուշակն այնպէս էր կուշ եկել, որ հազիւ կարելի էր ճանաչել:

— «Ո՞վ քաղեց ձեզ և ինչի՞ համար իմ սիրուն ծաղիկներ, հարցըրեց կարեկցելով մատաղ դիցուհին:

— «Նեկտարն ինձ քաղեց, շնչաց նուազած ձայնով մանուշակը»:

— «Իսկ ինձ, դիցուհի, քո նազելի Ամասփէրան շարունակեց չորացած վարդը: Քաղեցին և դէն ձգեցին մեզ վայրի բոյսերի և մացառների մէջ»:

— «Հասկացա՞յ», խորհրդաւոր կերպով արտասանեց սիրոյ կոյսը և դառնալով դէպի վարդը՝ շարունակեց. — «Քո ցօղունը կը պատեմ փշերով, թող այդ քնքոյշ ձեռքերը չը մօտենան քեզ. դու հրապուրէ՛

նրանց քո տեսքով և վիրաւորէ, երբ կը մօտենան քեզ քաղելու համար ...

Իսկ քեզ, իմ անմեղ մանուշակ, ի՞նչպէս պաշտպանեմ ես»:

— «Ինձ ոչ ոք չէր տեսնում, դիցուհի, երբ ես ընկած էի մացառների մէջ. ինձ համար ընտրիր այն անշուր վայրը. այնտեղ ես կը խոնարհեցնեմ իմ գլուխը և անտես կը մնամ մարդկանց աչքերից:

«Թող այդպէս լինի, ասաց վըշտացած դիցուհին և տխուր սուտըրհեռաճ հեռացաւ չորացած ծաղիկների մօտից:

Այդ օրուանից վարդի ցօղունը ծածկուեցաւ փշերով, իսկ սիրուն մանուշակը թագնուեցաւ բոյսերի և մացառների մէջ...

Փ Ո թ Ո Ր Ի Կ

Խաւա՛ր, է իմ երկինքը... աստղերը աղօտ, լուսինը դժգոյն է փայլում երկնակամարի վերայ, իսկ արեգակի աղօտ ճառագայթները անդօր են ջերմացնելու իմ սառած սիրտը. իմ սի՛րտը, որի արեւը, լուսինն ու աստղերը դճ՛ւ ես միայն իմ հրեշտակ...

Հանգիստ չէ սիրտս... ես լսում եմ մի արտասովոր բաբախ... այն խոր և ամայացած փլատակների մէջ կատարվում է մի ահաւոր չարիք... Ո՛րք փախչել նրա ձեռքից, սրտեղ

որոնել մի հանգիստ. ո՛ր, ինձ համար չկա՞յ հանգիստ, իմ հանգիստն ու երջանկութիւնը դու ես խել դճ՛ւ, իմ մտքերի թագուհի...

Թափառում եմ միայնակ, մարդկանցից հեռու, ահաւոր անտառների և հսկայական լեռների մէջ. բայց ինչի՞ համար ինձ չեն սարսափեցնում բնութեան արհաւիրքները. որովհետեւ իմ հոգուս մէջ քո բացած անդունդները աւելի խոր են ու ահաւոր քան կոստական անտառը և հսկայ լեռուը, ո՛վ երկնային ոգի...

Ինձ համար ատելի են աշխարհը, կեանքը և մարդիկ. ինչի՞ եմ խորշում նրանցից. ինչի՞ եմ սիրում

աւագոտ անապատը. ինչի՞նք համ սիրում
մենակ, միշտ մենակ՝ թափառել... Եւ
որովհետեւ դու իշխելով իմ սրտիս,
վերայ՝ չես կամենում որ մի այլ
աստուած թագաւորէր այնտեղ հը-
րեշտակս...

Սիրում եմ անտառի որոտագոշ
հեղեղատը. սիրում եմ ծովային ա-
լիքների ասեղաձայն գոռումը, որ
մոնչում և հեկեկում է որպէս ախ-
եղերքի վիրաւոր հսկան: Ինչի՞նք եմ
սիրում լսել, անվերջ լսել սև ու փր-
փրացող ալիքների որոտը. — Եւ,
որովհետեւ նրանք նման են իմ ներ-
քին ձայնին հրեշտակս... սրտի և
ծովի փոթորիկները մի Աստուած
ունին միայն:

Յերեկը չկայ ինձ հանգիստ, գի-
շերը քուն չի իջնում իմ աչքերի

վերայ... Ինչի՞նք չես քնում, ո՞վ է
խլում ինձանից գիշերային ժամե-
րիս հանգիստը — յոգնած և լուծա-
պառ սրտիս վերջին նեցուկը —
ԴճԷ, իմ հրեշտակս դճԷ, որ կամե-
նում ես գիշեր ու ցերեկ անընդ-
հատ աղօթել ու ծունր չոքել քո
առջև...

0045662

2013

2001

ՀՀ Ազգային գրադարան



NL0015662

